* * *

Երկու քայլ աւելի վեր, Կենտկոմի դրան մօտ, դետեղել են Լենինի լուսանկարը: Սեւով զարդարուած չրջանակ: Սեւով եւ կարմրով:

Իկօնը՝ կաւեղէնի կանութի գործակատարի դէմքով, ձախ ձեռքը գրպանում՝ նայում է պարապի մէջ եւ մտրակող հովի տակ դողում է: Նրա աջ կողմից, կանգնել է անչարժ, մեծ մի փափախ գլխին, լուսաւորութեան կոմիսարը եւ ձեռքին բռնել է մի հրացան:

Ձախ կողմից, կանգնել է Կենտկոմի քարտուղարը եւ նոյնպէս ձեռքին բռնել է մի հրացան:

Պատուոյ պահակներ Լենինի լուսանկարի մօտ:

Անցնող քաղաքացիները պարտաւոր են — Լուսանկարի առջեւից անցնել պատշաճ յուզարկաւորական քայլով, չխօսել, չինդալ, դէմքի վրայ ձեւացնել որոշ տրամութիւն, գլուխը խոնարհել, գլխարկը հանել:

Կոմիսար եւ քարտուղար մեծ ուշադրութեամբ դիտում են, թէ ով ի՞նչպէս է քայլում, լուսանկարի առջեւից անցնելու ժամանակ ի՞նչ դիրք է բռնում, երեսի վրայ ի՞նչ արտայայտութիւն ունի, գլխարկը յօժարութեա՞մբ է հանում թէ չէ, գլուխը քանի՞ մատ է իջեցնում:

Կարեւոր է: Վերին ատիճանի: Միայն նայդպիսի դէպքերում կարելի է հասկանալ քաղաքացու իսկական հոգեբանութիւնը: Խօսքերը ոչինչ չարժեն: Ցայտնի է, որ ամէնքը սըտում են: Խօսքով ամէնքն էլ բանուորա-դիւզացիական իշխանութեան ամենախոնարհ ծառան են, բեժիմի պաշտպանը, լոյալ եւ ուղղափառ սպասարկուն: Իսկ այնտեղ, նրանց հոգու մէջ ի՞նչ է կատարւում՝ դա է հարցը:

Դա՛ է հարցը:

Բարեբախտաբար քաղաքացիները այնքան էլ ապուշ չեն: Նրանք ամէն բան զգում են, ամէն բան հասկանում են: Միամի՛տ պէտք է լինել պահակների դուրս նետուած, լատեսող աչքերը չտեսնելու համար:

Շուկայի պանիր ծախող նպարավաճառը փափախը քսան քայլ առաջ է հանում, մատերի վրայ բարձրանում, ձեռքերը կրծքին սեղմում եւ գլուխը մինչեւ գետին խոնարհում: Այնպէս, ինչպէս ժամանակին Եպիսկոպոսի առջեւ:

Մարդաբ աղան մօրուքը բռնում է եւ մէջքը ծռում:

Համալսարանի դասախօսը ակնոցները ուղղում է, գլխարկը հանում, եւ խելացի ու իմաստուն աչքերով նայում դէպի լուսանկարը: Ի՜նչ մեծ կորուստ, ի՜նչ մեծ կորուստ...

Սպեկուլեանտը զգուշօրէն ծռում է մօտակայ փողոցը: Վստահ չէ իր դէմքի արտայայտութեան վրայ: Հեռո՞ւ սատանայից...

Իսկ իրենք, ցրտի տակ անշարժ կեցած փափախաւոր պահակները, նմանում են մանկական, փայտէ տաշուած զինուորներին, որոնց վրայ եթէ փչես, ամբողջ մարմնով գետնի վրայ կ'երկարին:

Ճակատագիրը տարօրինակ խաղեր է խաղում մարդկանց հետ: Լուսժողկոմի աննչան, ժամանակին Թիֆլիսի Գարավինսկու պրոսպեկտի վրայ ոստոստող անձը, զինուորական պահակի այս դիրքի մէջ: Հսկայի կօշիկներ հագած փոքրամարմին այս կատուն: Ու ա-ժան այս լուսանկարը, ժան լաթերի տակ կորած...

Մտածում եմ՝ ի՜նչ սոսկալի պատիժ է: Ինչպէ՜ս պատմութիւնը գիտէ հեղնել, ծիծաղելի դարձնել այն ամէնը, ինչ որ հարազատ չէ, անմիջական եւ դարերով արբանուիրուած աւանդութիւն չէ:

Գիւղացու ամենաարտատոց դիրքը աւետարանի կամ սրբի առջեւ՝ բնական է, յուզիչ եւ հասկանալի: Մատաղը, պարը, ծունկ չոքելը, մոմ վառելը, հողը համբուրելը՝ ամէն ինչ պատմութեան, հոգեկան պատմութեան մարմարի մէջ ուժգնօրէն քանդակուած է: Ամէն ինչ հոգեբանօրէն պատճառաբանուած է, ու ամէն ինչ կարող է երգի վերածուել:

Իսկ այստե՞ղ:

Երգիծանքով առատ դաւառ է:

Գաւառ: Ամենուրեք նոյնանման, փոշիոտ եւ ծիծաղելի:

— Կօշոն Սիւր Մարնում տեղի ունեցող արձանի բացման հանդէսը: Երեք ու կէս հաստափոր պաշտօնեաների ինքնագոհ հանդիսաւորութիւնը: Հրձիգների նուագախումբը՝ կի-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան